



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՀԻԴՐՈՕԴԵՐԵՎՈՒԹԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

« 08 » 02 2021թ.

№ 08/ԼԱ/ - 51

Փետրվարի 1-7-ը դիտված հիդրոոդերևութաբանական
պայմանները ՀՀ-ում

Փետրվարի 5-ին շրջանների զգալի մասում, 6-ի գիշերը առանձին շրջաններում դիտվել են տեղումներ: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Ջերմուկում՝ 15մմ, Որոտանի լքք.-ում՝ 10մմ, Ֆանտանում և Արենիում՝ 9մմ, մնացած շրջաններում՝ 1-5մմ քանակությամբ: Փետրվարի 1-4-ը, 6-ի ցերեկը և 7-ին դիտվել է առանց տեղումների եղանակ:

Օդի օրական միջին ջերմաստիճանը փետրվարի 1-ին նորմայից բարձր է եղել 5-8 աստիճանով, 2-4-ին՝ 3-7, 5-ին՝ 6-9, 6-7-ին՝ 4-7 աստիճանով:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է. Տավուշում, Սյունիքի հովիտներում գրանցվել է +16...+20°C, Լոռիում, Սյունիքի նախալեռներում՝ +11...+16°C (Գորիսում՝ +17°C), Արարատյան դաշտում, Վայոց Ձորի, Կոտայքի և Արագածոտնի նախալեռներում՝ +8...+12°C (Թալինում՝ +6°C), Գեղարքունիքում, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի լեռներում՝ +3...+7°C, Շիրակում՝ +2...+5 աստիճան տաքությամբ:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է. Շիրակում գրանցվել է -10...-14°C (Աշոցքում՝ -24°C), Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի լեռներում՝ -7...-12°C (Հրազդանում և Ծաղկահովիտում՝ -14°C, Ապարանում՝ -15°C), Գեղարքունիքում՝ -5...-10°C (Մասրիկում՝ -18°C, Գավառում և Մարտունիում՝ -12°C), Արարատյան դաշտում, Լոռիում, Արագածոտնի, Կոտայքի և Վայոց Ձորի նախալեռներում՝ -2...-6°C, Տավուշում, Սյունիքում՝ -2...+1°C (Սիսիանում՝ -8°C, Մեղրիում՝ +3°C):

Շաբաթվա ընթացքում դիտվել է քամի՝ Իջևանում, Տաշիրում, Ստեփանավանում, Սևանում՝ 8-15մ/վ, պողթկումների ժամանակ՝ 15-21մ/վրկ (Պուշկինի լքք.-ում՝ 14-28մ/վրկ, պողթկումների ժամանակ՝ 20-40մ/վրկ, Տաշիրում՝ 16-18մ/վ, պողթկումների ժամանակ՝ 20-22մ/վրկ) արագությամբ:

Փետրվարի 5-ին Գյումրիում դիտվել է բուք՝ 6մ/վրկ արագությամբ, տեսանելիությունը՝ 500մ:

Շաբաթվա ընթացքում առանձին շրջաններում դիտվել է մառախուղ (փետրվարի 2-ին Արարատում դիտվել է մառախուղ՝ 40մ տեսանելիությամբ):

Փետրվարի 7-ի դրությամբ ձյան ծածկը կազմում է Արագած բարձր լեռնային կայանում 99սմ, Որոտանի լքբ.-ում՝ 68սմ, Ամբերդում՝ 64սմ, Ջերմուկում՝ 54սմ, Անանուն լքբ.-ում՝ 45սմ, Հրազդանում՝ 38սմ, Ապարան լճայինում՝ 34սմ, Աշոցքում՝ 31սմ, Ամասիայում՝ 26սմ, Սեմյոնովկայում՝ 24սմ, Ապարանում և Ֆանտանում՝ 23սմ, Մասրիկում՝ 22սմ, Սևանում՝ 16սմ, Ուրցածորում՝ 13սմ, Արթիկում՝ 11սմ, մնացած շրջաններում՝ 1-9սմ:

Հանրապետության գետերը գտնվում են ձմեռային սակավաջուր փուլում:

Սևանա լճի մակարդակը շաբաթվա ընթացքում բարձրացել է 1սմ-ով և կազմել՝ 1900.53մ (07.02.21թ.), որն անցյալ տարվա նույն օրվա մակարդակից բարձր է 12 սմ-ով:

Հարգանքով՝

Տնօրենի ժամանակավոր
պաշտոնակատար

Լ.Ազիզյան

Տնօրենի տեղակալ Գագիկ Մուրենյան
Հեռ.՝ 012 31 79 29